

ՆՆՐԱՆԱՆ ԵՆՈՐՀԱՆՈՒ ԴՈՐՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջնադարյան հայ մեծ բանաստեղծ և մատենագիր Ներսես Ենորհալու ստեղծագործությունների թարգմանությունները հին պատմություն ունեն:

Դեռ XVIII դարի սկզբներին ֆրանսիացի հայագետ Ժակ Վիլլուտը Ներսես Ենորհալու «Յիսուս որդի» պոեմը որակել է «աստվածային զիրք»:

XVIII դարի կեսերին ֆրանսիացի հայագետ Դիյոմ Վիլֆրուան հայ շարականների մասին ընդհանրապես և Ներսես Ենորհալու շարականների մասին մասնավորապես արտահայտվել է հետևյալ խոսքերով. «Դրանք հոյակապ, հուզիչ տաղեր են, որոնք ընդունակ են սրտերը առնչելու, խանդաղատելու, վերացնելու ամենագոր հմայքներով»:

XIX դարից արդեն ձևանմուխ են լինում Ենորհալու երկերի օտար թարգմանություններին:

1825-ին առաջին անգամ Վենետիկի Մխիթարյանները ֆրանսերեն թարգմանությամբ և առանձին հատորով հրատարակում են Ներսես Ենորհալու դավանաբանական ճառերը հեղինակի բազմաթիվ նամակների հետ միասին¹:

1829-ին Վենետիկում լույս է տեսնում Ներսես Ենորհալու «Թուղթ ընդհանրականը» իտալացի հայագետ Զուգեուպե Կապուլլիտի լատիններեն թարգմանությամբ²:

¹ Inni sacri di San Nerses il Grazioso, traduzione italiana in occasione dell'otto centenario della morte. San Lazzaro-Venezia, 1973. Introduzione, էջ XVII—XXIV.

² Nerses IV Glajetzi, Discours synodal, suivi d'un grand nombre de ses lettres. Venise, St. Lazare, 1825, 332 p. Այս և ներքոհիշյալ օտար աղբյուրները բաղել են հետևյալ աշխատությունից. Ա. Սարգսյան, Հայկական մատենագիտություն. Bibliographie de l'Arménie. ՀՍՀ ԳԱ հրատարակություն, 1969:

³ Nerses IV Glajetzi, Epistola pastoralis, quam ex Armenio latinitate primum donatum... publici juris facit J. Cappelletti. Venetiis, S. Lazzarus, 1829, 91 p.

1830-ին Վենետիկում տպագրվում է Ենորհալու հոգևոր և պատմական բանաստեղծությունների ծավալուն հատորը ֆրանսերեն թարգմանությամբ⁴:

1833-ին Վենետիկում լույս են տեսնում Ենորհալու դավանաբանական նամակները երկու հատորով, հիշյալ իտալացի հայագետ Կապուլլիտի լատիններեն թարգմանությամբ⁵:

Այնուհետև, 1861-ին, Վիեննայի Մխիթարյանները լույս են ընծայում Ենորհալու հոգևոր երգերից մի զբոլակ գերմաներեն թարգմանությամբ⁶:

Ֆրանսիացի հայագետ էդուարդ Դյուլորիեն 1869-ին Փարիզում ֆրանսերեն հրատարակում է հայագիտական ուսումնասիրությունների մի հատոր, ուր զետեղել էր Ենորհալու «Յիսուս որդի» պոեմից ընդարձակ հատվածներ՝ իր սեփական թարգմանությամբ⁷:

Մխիթարյան միաբանությունը 1810-ին ռուսականացվելու խոստովանիմ աղոթք-բանաստեղծությունը լույս է ընծայում 6 լեզուներով, ապա 1812-ին հրատարակում է 10 լեզուներով, 1815-ին՝ 14 լեզուներով, 1818-ին՝ 16 լեզուներով, 1823 և 1837 թթ.՝ 24 լեզուներով⁸ և, վեր-

⁴ Nerses IV Glajetzi, Poésies sacrées et historiques, Venise. St. Lazare, 1830, 630 p.

⁵ Nerses IV Glajetzi, Correspondances dogmatiques. Trad. de l'arménien en latin par J. Cappelletti. Venise, St. Lazare, 1833, 2 vol.

⁶ Nerses IV Glajetzi, Gebete von Patriarchen der Armenier S. Nerses Glajense verfasst. Wien, Mechitaristen, 1861, 23 p.

⁷ Ed. Du Laurier, Documents arméniens. T. I, Paris, 1869, pp. 226—268.

⁸ Ներսես Ենորհալու «Հավատով խոստովանիմ» այս սովյալները տե՛ս Հ. Դավթյան, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 38, 46, 60, 82, 108 և 220. տե՛ս նաև Ա. Շտիկյան, Հայ դրականության ժամանակագրություն (1801—1850), Երևան, 1973, էջ 82, 88, 96, 109 և 129:

ջապես, 1882-ին՝ 36 լեզուներով: Վերջին հրատարակությունը կազմում է 600 էջ⁹:

Շնորհալու այդ ստեղծագործության բազմալեզու հրատարակությունը բացառիկ երևույթ էր:

Նույն «Հավատով խոստովանիմք» բազմալեզվյան մի հրատարակություն է ունենում նաև Մոսկվայում, ուր 1830-ին Հաղարյան ճեմարանի տպարանը լույս է բնծայում այն 12 լեզուներով, հետևյալ վերնագրով. «Հուլակաւօր աղօթք տեառն ներսիսի սրբազան կաթողիկոսի Հայոց, տպագրեալ հրկոտասան լեզուօք» («Молитва св. патриарха Персеса, изданная на 12 языках»)¹⁰:

1886-ին Բելգիայում հրատարակվում է հայագետ Ֆելիքս Նեվի ֆրանսերեն մի ուսումնասիրությունը՝ նվիրված ներսես Շնորհալուն¹¹:

Արշակ Զոսյանյանն իր «Բուրաստան Հայաստանի» ֆրանսերեն ժողովածուի երկրորդ հատորում թարգմանաբար ղեկավարում է Շնորհալու հանելուկներին¹²:

1941-ին Բոստոնում անգլերեն թարգմանությամբ լույս է տեսնում Շնորհալու դավանաբանական երկերից մի գրքույկ՝ Մ. Փոլադյանի թարգմանությամբ, ներածականով և բացատրականով¹³:

Այնուհետև 1947-ին Նյու-Յորքում անգլերեն թարգմանությամբ հրատարակվում է Շնորհալու «Յիսուս որդի» պոեմը: Թարգմանիչն էր ամերիկուհի հայագետ Զեն Վինգատը¹⁴:

Վերջապես ներսես Շնորհալու 800-ամյակի

կապակցությամբ Վենետիկում 1973 թ. լույս տեսավ Շնորհալու երկերը պարունակող մի հատոր իտալերենի թարգմանությամբ՝ հետևյալ խորագրով:

Imni Sacri di San Nerses Il Grazioso, tradotti e pubblicati a cura del P. Mesrobio Gianascian Mechitarista, in occasione dell'otto centenario della morte (1173-1973). San Lazzaro-Venezia, 1973.

Շուրջ 250 էջ և 6000 տող կազմող ներկա հատորը չբեղատիպ մի հրատարակություն է, որով ներսես Շնորհալու շոգևոր երգերը առաջին անգամ օտար ընթերցողին են ներկայացվում այդքան ծավալուն չափերով: Հատորը կազմել, թարգմանել և ներածական հոդվածը գրել է բանասեր, բանաստեղծ և գրականագետ Մեսրոպ Ճանաչյանը, իսկ հատորի առաջարանի հեղինակն է իտալացի հայագետ Ուգո Ֆադալուն: Թարգմանությունը կատարված է բարձր ճաշակով, հայերեն բնագրի ոգուն ու արվեստին քաջամուտ և իտալերեն լեզվի նրբություններին խորագիտակ մարդու ձևոհասությամբ. իտալերեն թարգմանության մեջ պահպանված է Շնորհալու շարականների պարզությունն ու գեղեցկությունը. կարելի է ասել, որ իտալերեն թարգմանությունը խորազատ հայելացումն է հայերեն բնագրի, ի բաց առյալ բնագրի հանդերձ, որոնք դանց է առել թարգմանիչը, լավագույնս և անխաթար կերպով փոխանցելու համար իտալացի ընթերցողին Շնորհալու շարականների ներքին հմայքը:

Իր առաջարանում Ուգո Ֆադալուն ի միջի այլոց գրել է. «Փոքրիկ պոեմներ, օրհներգեր, տաղեր—այն սրանք են բանաստեղծական այն երկերը, որոնք կազմում են մեզ ներկայացված ներկա հատորյակը: Զանց առնելով բանաստեղծի մեծ պոեմները, թարգմանիչը ընտրել և մի ուրիշ ազգի լեզվով ներկայացրել է այն գործերը, որոնք իրենց անմիջական ապրումով ազնիվ լավ են զգացնում հեղինակի քնարական շունչը: Հոգևոր երգերի այս հավաքածուի մեջ ներկա է աստվածաբանն ու գեղագետը, և սակայն բանաստեղծի ձիրքը այնպիսին է, որ ոչ թե սահմանափակել, այլ որոշ իմաստով ազնիվ է դորացրել արտաայտչական կերպավորումը: Քնարական գեղումը ազատ է, մշտակա, առանց թուլացումների: Սուրբ գրքի տվյալները, որոնք առկա են քերթվածներում, աստվածաբանական փաստերը, որոնք հավաստվում են նրանց մեջ, ստանում են քնարական պատկերների ձև, հույզի և ոգու լուսարձակումներ: Բանաստեղծական անսպառ գյուտերի թարմությունը, որ տող առ տող ծավալվում է մեծ մասամբ ութվանկանի տողերի վրա հիմնված չար-

⁹ Այս հրատարակությունը ունի լատինական ներքին հետևյալ բնագրանույն տիտղոսաթերթը. Nerses IV Glajetzi. Preces Sancti Glajensis Armeniorum Patriarchae, triginta sex linguis editae. Venetiis, S. Lazarii, 1882, VII+600 p.

¹⁰ Հ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 176—177: Ս. Շտիկյան, նշվ. աշխ., էջ 179:

¹¹ Félix Nève, Le Patriarche Nersès IV, dit Shnorali, envisagé comme écrivain. Louvain, 1886.

¹² Archiac Tchobanian, La roseraie d'Arménie, II, Paris, 1923, pp. 6-10.

¹³ Nerses IV Glajetzi, The Profession of Faith of the Armenian Church. Transl. with Introduction and Comment by T. Vart. Poladian. Boston, Baikar Press, 1941, 67 p.

¹⁴ Nerses IV Glajetsi, Jesus Son, Only Begotten of the Father. A prayer. Rendered into English by J. S. Wingate. New York, 1947, 158 p.

տարաճյուն տաղաչափության մեջ, միայն ճանաչանի գրչով կարող էր հաջողապես փոխադրվել մի ուրիշ լեզվի:

Շնորհալու իտալերենն այս հատորյակը պարզաբան է Բորոս Թոսլինի չորս մանրանկար-

ների (վերցված Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրերից) արտատպությունում, իսկ հատորի կապը՝ ներսես Շնորհալու գունատիպ պատկերով:

Ս. ՏԱՅԱՆ

ԵՐԵՎԱՆՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԳԻ ՄԵԼԻՔ-ՕՂԱՆԵՍՈՎԻ «ԴԱՎԹԱՐԸ»

Մեզ է հասել երևանցի առևտրական Կարապետ Մելիք-Օղանեսովի առևտրական գործարքների տետրը¹: Գրառումները կատարված են նրա կյանքի վերջին տարիներին՝ 1817—1819 թթ., երբ նա արդեն համբավ հանած վաճառական էր՝ ունեցվածքի, բնականի տեր: Մելիք-Օղանեսովը ծնված պետք է լինի 1770—1775 թթ. և վախճանվել է 1819 թ.: «Դավթարում» ոչինչ չկա նրա գործունեության սկզբնական շրջանի մասին: Ի տարբերություն նախորդներից մեկի՝ առևտրական Զաքարիա Ազուլեցու², որը մանրամասնորեն գրանցում էր իր անցած ճանապարհի, բնականի, գեպերի ու այլ իրադարձությունների մասին, Կարապետը գրառում է միմիայն առևտրական գործարքները: «Ավ թվին 1266 (1817) յօթստոսի 1-ին, որ ես Կարապետըս Մելիք-Օղանեսով երևանից դուս ելայ որ գնամ Պոլիս իմ ամեն ինչըս գրեցի մէկ դավթարում, մհրեցի, դրի Սուրբ աթոռն որ է էջմիածին, որ ամեն քանքս գրած է, առքս և տուրքս և մալքս և պարտքս և վորքս ինչս միուստ միոյէ գրած է այնտեղ», սկսում է նա իր «Դավթարը»: Պոլիս է հասնում սեպտեմբերի 20-ին: Նրան ընկերակցում էր քեռու տղան՝ Աղամալ Եղիազարյանը, որը նույնպես առևտրի էր գնացել: Պոլսում Կարապետը գնումներ է անում ինչպես իր, նույնպես և Աղամալի համար, մեկ առ մեկ գրանցելով գնված ապրանքները, դները, նրանց համար վճարված մաքսը: Գնում է մոտ 50 տեսակի ապրանք, գրանցից՝ թավիշ, լիթ, շալիզեն, ժամացույցներ, ոսկու կշեռքներ և այլն: Պոլսում մրնում է 6 ամիս և ապա՝ «Ավ թվին 1267 (1818) մարտի 18-ին, ես Կարապետ Մելիք-Օղանեսովս եկի Պոլսից երևան նստեցի, որ իմ արած Պոլիս խրիտն ծախեմ: այս է ծախքս և ամեն ինչըս միուստ միոյէ անվանի»: Երևանում ապրանքը նա վաճառում է ոչ թե արշինով, այլ թուփերով: Միրզա Զաֆարին՝ 20 թուփ, Գանջանլի Ալահվերտուն՝ 7 թուփ, վրացուին՝ 25 թուփ և այլն:

¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 31, վալ. 234:

² «Զաքարիա Ազուլեցու օրագրությունը», Երեվան, 1938:

Կան նաև երևանում վաճառվող ապրանքների գրանքը:

Կա նրա մի նամակը՝ գրված նույն թվականի հուլիսի 25-ին՝ էջմիածին՝ ներսես Աշտարակեցուն, որից պարզվում է, որ ն. Աշտարակեցին նրանից ինչ-որ հաշիվներ է պահանջել, որին Կարապետը պատասխանում է. «Ումպր էիր արել վասն գրերիս համար, որ բերեմք իմ ողորմած տէր, գրերքս Թիֆլիս քանի մէջ է, պիտի ծառայէ գրեմս հանեմ թէ չէ ում գրեմ կամ ում աւէմ որ հանի գրկի» ու այնուհետև. «Կարող եմք ամեն կերպով գրով և տպով դուշմանիս հախեն դալ, երփ որ չի կարացի գրով կամ մալով պատասխանի տալ, յետոյ տէրութիւնդ որպէս Ած կանք տացէ որ ծառայիդ ետ գնամք շուտով գամք. ես ասի իմ եղբայրքս ինքն իրան խըշմըտանք անէ. թէ չի արեց իրան կամացն է ես պատրաստ եմ ի տանջանս, բայց աստված Անդունի և Վախտանգի պէս ճշմարտութիւն չի կորուսանէ. ես իմ մալէս էլ անցանիմ, ջանես էլ անցայ և իմ օղուշաղես էլ անցայ, աստված հախըն նըհախի չի տայ, խնորեմ պատասխանիս ջամբես որ քարվանն գնում է. ողջ լերուք. տէրութեանդ խոնարհ ծառայ Կարապետ դի Մելիք Օղանեսեան, երևան»:

Այնուհետև կատարում է երկրորդ ուղևորությունը՝ գնալի Թիֆլիս: «Ավ թվին 1268-ի (1819) մայիսի 1-ին, ես Կարապետ Մելիք-Օղանեսովս իմ ամեն քանովքս թէ փող, թէ մալ և թէ տան մէջ սալայմաթ ինձ հետ եկի քայղաքըն՝ Մելիքի քարվանսարէն, ջութամ ինչ ունեմ ինձ յետէ, բայց ինչ որ ծախում եմ կամ այլոց տամ կամ ում մօտն գաղ ունիմ այս դավթարումն կու գրեմ անվանի»: Թիֆլիսում վաճառում է Պոլսից բերած ապրանքը: Ահա Թիֆլիսի գրառումներից.

«Ավ թվին 1268-ին (1819) ամսեանն մայիսի 20-ին Թիֆլիս քաղաքումն տվի պարոն Կուրկենին որ է երկուհարիւր երեք գաղ խառայ ֆրանկի մէկ գաղն 2750 դիանով, փողի ջամնէ... որ փողն յավթալուզով տալ ջամիին երեք թուման տայ մինչի վերջ ինեկն այս իւղորովն տվի ու

³ Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 32, վալ. 89: